ք.Եղեգնաձոր *<< 23>> դեկտեմբերի 2022թ.*

Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Ա.Կարապետյանի, ով գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, /այսուհետ՝ Պետական մարմին/, մի կողմից, և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Խաչիկի միջնակարգ դպրոց, ՊՈԱԿ-ը՝ ի դեմս տնօրեն Ք.Խաչատրյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ Կատարող), ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 22.12.2022թվականի թիվ 2058-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 1937-Ն որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Պետական մարմինը Կողմին հատկացնում է **3200.0 հազ.դրամ**/երեք միլիոն երկու հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ ընթացիկ դրամաշնորհ՝ նոշտ վառելիքի /քարածխի/ ձեռք բերման նպատակով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու Համայնքապետարանի կողմից իրականացվող դրամաշնորհի օգտագործման նպատակաուղղվածությունը.
2.1.2. դրամաշնորհը նպատակային չօգտագործելու դեպքում Համայնքապետարանից պահանջելու վերադարձնել պետական բյուջե.

2.2. Համայնքապետարանն իրավունք ունի

2.2.1. Դրաժամրվել հատկացված դրամաշնորհից կամ դրամաշնորհի չափից՝ ներկայացնելով իրեն անհրաժեշտ գումարի չափը.

2.3. Պետական մարմինը պարտավոր է

2.3.1. անհրաժեշտության դեպքում աջակցել Համայնքապետարանին.
2.3.2. հատկացնել դրամաշնորհի միջոցները՝ ըստ սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող ժամանակացույցի.

2.4. Համայնքապետարանը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրով սահմանված նպատակներով և չափաքանակներով.
2.4.2. իրականացնել դրամաշնորհի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվառումը հաշվապահական հաշվառման վարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան.
2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.
2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում և հետագայում ապահովել դրամաշնորհին վերաբերվող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

3. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո Պետական մարմինը սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը փոխանցում է համայնքապետարանի գանձապետական համապատասխան հաշվին:

4.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել և լուծվել կողմերի համաձայնությամբ: Պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր:
4.2. Համայնքապետարանը իրավունք ունի ցանկացած ժամանակ մինչև դրամաշնորհի իրեն հանձնելը հրաժարվի դրանից: Այդ դեպքում պայմանագիրը համարվում է լուծված:
4.3. Պետական մարմինը կարող է ցանկացած ժամանակ ամբողջությամբ կամ մասամբ լուծել կամ փոփոխել սույն պայմանագիրը այդ մասին գրավոր ծանուցելով համայնքապետարանին, եթե պարզվի որ վերջինս չի կատարում սույն պայմանագրի որևէ պայման:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. ՊԱՅՄԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրը կազմված է երեք էջից, ուժի մեջ է մտնում կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից մինչև 2022թվականի դեկտեմբերի 30-ը:
7.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, կազմված է երկու օրինակից, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:
7.3. Սույն պայմանագրի բոլոր լրացումներն ու փոփոխությունները կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կդառնա սույն պայմանագրի անբաժանելի մասը:
7.4. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

8.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան	Խաչիկի միջն. դպրոց ՊՈԱԿ
ք.Եղեգնաձոր, Շահումյան 5	Վայոց ձորի մարզ գ. Խաչիկ
Կենտրոնական գանձապետարան	Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ	Հ/Հ 900358000223
ՀՎՀՀ 08907717	ՀՎՀՀ 08902799
գլխավոր քարտուղար Ա. Կարապետյան	Տնօրեն՝ Ք. Խաչատրյան
/Ստորագրություն/	/Ստորագրություն/